ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<11>> հոկտեմբեր 2013թ. N290

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սայաթ Նովա փողոցի N6 նրբանցքի N3ա տան բնակիչ Լիլիկ Ասատրյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հուլիսի 2-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Լիլիկ Ասատրյանին հատկացնել 20000 /քսան հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ.Կարապետյան /՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

220

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍԾՏԳ-ի կողմից ք. Արմավիր Սայաթ Նովայի 6 նրբ. 3ա տան բնակիչուհի Լիլիկ Ասատրյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Լիլիկ Ասատրյանի ընտանիքը բաղկացած է 1 շնչից, միայնակ, անժառանգ թոշակառու է: Ստանում է 18202 դրամ կենսաթոշակ:

Ընտանիքը հաշվառված է Արմավիրի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ստանում է 16000 դրամ նպաստ:

ԱՐՄԱՎԻՐԻ ՍԾՏԳ-Ի ՊԵՏ՝ Ռ.ԱՐՏԵՆՅԱՆ

կատարող՝ Գ. Հակոբյան

02.07.2013թ.